

ՍԵՊԱԳԻՐ ԱՂՔՅՈՒՐՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ
ՄԻ ՔԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վ. Ա. ԳՍՅՍԵՐՅԱՆ

Արգիշթե¹ I-ի (մ. թ. ա. 786—764 թթ.) հորիստության տարեգրության² և նրա կրկնօրինակը հանդիսացող Վանի Ս. Սահակ եկեղեցուց գտնված արձանադրության մեջ³ դեպքերը սկսվում են դեպի Տեյաւեիս (Teiauehe)⁴ երկիրը Արգիշթե I-ի կատարած արշավանքի նկարագրությամբ:

Այս արշավանքի ընթացքում բացի Տեյաւեիս երկրից Արգիշթե I-ը գրավում է նաև Եթիու (KURE-ti-ú-né/he) ցեղալիք միության կազմում գտնվող Շերիադե (KURŠertaze)⁵, Բիանե (KURBiane)⁶, Խուշանե (KURHušane)⁷, Թարիունե (KURTarlune)⁸, Դիդենե (KURDidene)⁹, և Աշկալաշե (KURAsqalaše)¹⁰ երկրները, որոնց տեղորոշման հարցի շուրջը մասնագիտական գրականության մեջ կան երբեմն խիստ հակասական մի շարք կարծիքներ:

Այսպես՝ Գ. Ա. Ղափանցյանը Թարիունե երկիրը տեղադրում է Տարոն գավառում, նույնացնելով նաև KURTarlune — Տարոն երկրանունները: Խուշանե երկիրը ևս տեղադրում է Տարոնում, նադիկ լճից 20 վերստ արևմուտք, ժամանակակից Հոսանան գյուղի տեղում, իսկ Դիդենե երկրանունը, համեմատելով Դիադին գյուղանվան հետ, տեղադրում է Բյուրակնյան լեռների հարավային լանջերին¹¹:

Ն. Գ. Ադոնցը վերոհիշյալ բոլոր երկրները տեղադրում է պատմական Հա-

¹ Հնդվածում հանդիպող ուրարտական հատուկ սնունդները տրված են Ի. Մ. Դյակոնովի մշակած սիստեմի համաձայն (տե՛ս И. М. Дьяконов. Урартские письма и документы. М.—Л., 1963, с. 29—31, 97—100 և նրա մյուս աշխատություններում):

² Г. А. Меллишвили. Урартские клинообразные надписи (ՄԿՆ). М., 1960, № 127, I, стк. 1—10. Հ. Հ. Կարապետյան. Ուրարտական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի և հարևան պետությունների մասին.—Հայ ժողովրդի պատմության քրեստմատիա, Երևան, 1981 (այսուհետև ՈւԼ), № 22, էջ 58:

³ С. F. Lehmann-Haupt. Corpus Inscriptionum Chaldicarum. I—II, Berlin und Leipzig, 1928—1935 (այսուհետև CICH). XXVI; ՄԿՆ, № 128, A1, стк. 1—21, B1, стк. 1—6.

⁴ Տեյաւեիս (!Teiauehe) ընթերցումն առաջարկում է Հ. Հ. Կարապետյանը, տալով նաև !Teiauehe > Տայթ անցման լեզվական հիմնավորումը (Հ. Հ. Կարապետյան. Սեպագիր աղբյուրների Դայանու երկիրը.—ՀՈՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1978, № 6, էջ 71—72: նույնի՝ Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները.—ՀՈՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1978, № 10, էջ 55—56):

⁵ ՄԿՆ, № 127, I, стк. 7.

⁶ Նույն տեղում, տող 8:

⁷ Նույն տեղում, տող 8: CICH, XXVI; ՄԿՆ, № 128, B1, стк. 2.

⁸ ՄԿՆ, № 127, I, стк. 8, III, стк. 22, V, стк. 71.

⁹ CICH, XXVI; ՄԿՆ, № 128, B1, стк. 27.

¹⁰ CICH, XXVI; ՄԿՆ, № 128, B1, стк. 11.

¹¹ Գ. Ա. Ղափանցյան. Ուրարտի պատմություն. Երևան, 1940, էջ 157—158, 170, ծան. 3: նույնի՝ Историко-лингвистическое значение топонимии древней Армении. Ереван, 1940, с. 42 и прим. 2.

յաստանի Այրարատ նահանգում¹², առանց անդրադառնալու յուրաքանչյուրի միշտ տեղորոշմանը:

Գ. Ա. Մելիքիշվիլին թարիունե և խուշանե երկրները տեղագրում է Չլդր լճից հարավ-արևմուտք¹³, Շիրիադե երկիրը՝ էրզրում քաղաքից հյուսիս-արևելք, այսինքն Տեյալեխե երկրից հարավ¹⁴, իսկ Դիդենե և Բիանե երկրները՝ ընդհանուր կերպով Անդրկովկասի հարավ-արևմուտքում¹⁵:

Ն. Վ. Հարությունյանը մի դեպքում Բիանե և խուշանե երկրները տեղագրում է Տեյալեխե երկրից հարավ, հարավ-արևմուտք, հին Հայկական Եկեղյաց գավառի արևելյան սահմաններում¹⁶, իսկ Շիրիադե երկիրը՝ Տեյալեխե երկրից արևմուտք¹⁷, իսկ մյուս դեպքում՝ Բիանե, խուշանե և Շիրիադե երկրները միասին տեղագրում է Տեյալեխե-Տայքի արևմուտքում¹⁸:

Այսպիսով, հնդկականների մեծ մասը համակարծիք է միայն Տեյալեխե երկրի տեղագրման հարցում, որի անունը նույնացվում է Տայք նահանգի անվան հետ¹⁹: Այժմ բերենք խորհրդային տարեգրության և նրա կրկնօրինակի մեզ հետաքրքրող հատվածները և տեսենք, թե ինչպիսի հնարավորություն են ընձեռում դրանք այդ երկրների տեղորոշումը պարզելու համար:

Խորհրդային տարեգրության մեջ ասվում է. «...Այդ նույն տարում երրորդ անգամ ղինվորներ զննեցի, արշավեցի Տեյալեխե [ցեղի] վրա: Արքային Տեյալեխե [ցեղի] հպատակեցրի (?), գրավեցի Շիրիադե [երկիրը], քաղաքները այրեցի, ամրոցները ավերեցի: Կտրում էի մինչև Բուլթե [քաղաքը]: Բուն (?) Բիա(նե) (և) խուշա (երկրները) անշատեցի թարիու [երկրից]: Արշավեցի Ջաբխայան [երկրի] վրա...»²⁰:

Մի փոքր այլ կերպ է սկսվում նույն դեպքերի նկարագրությունը տարեգրության կրկնօրինակում: Արձանագրության սկզբում ասվում է, որ Արդիշթն I-ը արշավեց և հնազանդեցրեց Տեյալեխե ցեղի թագավոր Ուտուպուրշեին և Աբնուլուանե ցեղը²¹:

Այնուհետև ասվում է. «...Խալդյան մեծությամբ արշավեց Արդիշթե Մի-նուայորդին: Արդիշթեն [ահա] ինչ [է ասում]: Տեյալեխե (ցեղը) երրորդ անգամ ապստամբեց: Չինվորներ զննեցի, արշավեցի Տեյալեխե [ցեղի] վրա²²:

12 Ն. Գ. Ա. դ ո ն ց. Հայաստանի պատմություն. Երևան, 1972, էջ 213:

13 ՄԿՈ, Ե. 423:

14 Նույն տեղում, էջ 429:

15 Նույն տեղում, էջ 442, 443:

16 Ի. Բ. Արտյունյան. Бийинили (Урарту). Ереван, 1970, с. 193:

17 Նույն տեղում, էջ 406:

18 Նույն տեղում:

19 Գ. Ա. Халатянц. О некоторых географических названиях Древней Армении в связи с данными Ванских надписей.—Древности восточные, т. II, вып. II, М., 1901, с. 126. Կ. Հ. Բ ա ս ա ղ յ ա ն. Հայ նախարարությունները բևեռաձև արձանագրությանց մեջ.—«Բանասեր», 1902, № 7—9, էջ 316: С. F. Lehmann-Haupt. Armenien Einst und Jetzt. Bd. II, Heft 2, Berlin und Leipzig, 1931, S. 792. Ա. Խ ա շ ա տ ռ յ ա ն. Հայաստանի տեղագրական շրջանի քննական պատմություն. Երևան, 1933, էջ 24: Б. Б. Пнотровский. История и культура Урарту. Ереван, 1944, с. 27: Его же. Ванское царство (Урарту). М., 1959, с. 31: Г. А. Меликишвили. Днаухи (из истории Южного Закавказья в древневосточную эпоху).—Вестник древней истории, 1950, № 4, с. 26; ՄԿՈ, Ե. 424: Его же. Наирн—Урарту. Тбилиси, 1954, с. 168: М. Salvini. Natri Ur(u)a'iri. Roma, 1967, р. 67: Н. В. Арутюнян. Земледелие и скотоводство Урарту. Ереван, 1964, с. 170: Его же. Бийинили. с. 13 (прим. 10), 148, 158 (прим. 241), 393, 404:

20 ՄԿՈ, № 127, I, 5—9, թարգմանությունը ըստ ՈւԱ, № 22, էջ 58:

21 СІСН, XXVI; ՄԿՈ, № 128, А1, 3—5:

22 СІСН, XXVI; ՄԿՈ, № 128, А1, 10—17 (թարգմանությունը մերն է):

Հինգ հազար մարդ ելավ առջև կովով՝ Խարածուի դաշտից²³, Սրդայի-առջև²⁴: «...Կտրում էի մինչև Բիա[...] [երկիրը], Խուշանե [երկիրը]: Արշավեցի Դի-դենե [երկիր] վրա, Զուանե [քաղաքի] վրա: Զուանե քաղաքն արքայական, Տեյավեխե [ցեղի], այրեցի, դրեցի արձանագրություն Զուա(նե) քաղաքում²⁵: Ելա լեռնաշղթայի վրա, Աշկալաշեի վրա...»²⁶:

Արձանագրություններից կարելի է ենթադրել, որ երրորդ անգամ ապրամամբած Տեյավեխեի թագավոր (= իշխան) Ուտուպուրշեն այս անգամ դաշնակցել էր հարևան Շերիազե, Խուշանե, Դիդենե, Թարիունե և Բիանե Լրերուների հետ և միացյալ զորքերով, որոնց թիվը հասնում էր «հինգ-հազար» մարդու, դուրս եկել ուրարտացիների դեմ: Միացյալ զորքերը գտնվում էին Խարածուի դաշտում, իսկ Արգիշթե I-ի դեմ ճակատամարտի ելան Սրդայի առջև: Խարածուի դաշտը իրավացիորեն նույնացվում է Երզնկայի դաշտի հետ: Տրված է նաև [KUR]Iarašu > Երեզ անցման լեզվական հիմնավորումը²⁷:

Ինչպես գիտենք, նույն Խարածու > Երեզը, որը Խաչաշա երկրի կազմում A.ŠA ar-zi-ia-aš «Արծիայի դաշտ»²⁸ ձևով հիշատակվում է դեռևս խեթական աղբյուրներում, հին Հայաստանի հեթանոսական պաշտամունքի կարևոր կենտրոններից մեկն էր, ուր գտնվում էր Անահիտ աստվածուհու գլխավոր մեհյանը²⁹: Հնարավոր է, որ ուրարտական շրջանում ևս Խարածու > Երեզը կարևոր պաշտամունքային կենտրոն էր, և Նիթու երկրի զորքերը հավաքվել էին այնտեղ պատերազմից առաջ զոհեր մատուցելու: Սակայն [KUR]Iarašu > Երեզը գտնվում է Տուշպա-Վանից դեպի Տեյավեխե-Տայք տանող ճանապարհի միջին մասից արևմուտք, բավականին մեծ հեռավորության վրա և, հետևաբար, դաշնակցի զորքերը Խարածու-Երեզից պետք է շարժվեին արևելք, որպեսզի կարողանային փակել դեպի Տեյավեխե արշավող ուրարտական զորքերի ճանապարհը: Հենց Վանից Տայք տանող ճանապարհին, կամ մի քիչ արևմուտք, չհասած Տեյավեխե երկրին պետք է փնտրել Սրդա քաղաքը, ուր, ըստ արձանագրության, տեղի է ունեցել ճակատամարտը:

Նիթե ընդունելի համարենք այն տեսակետը, ըստ որի ուրարտերենին հատուկ է առաջին 'a վանկը կարդալ ua (ուա), ինչպես՝ D'Arubane = D'uarubane (Վարուբանե), 'Aza = *uaza (Վազա)³⁰, ապա կարող ենք՝ Arda-ն ևս կարդալ *uarda: *Uarda (Վարդա) անունը գրեթե նույնությամբ պահպանվել է պատմական Հայաստանի Վարդո գավառի անվան մեջ: Վարդո գավառը տարածված է եղել Բյուրակնյան լեռների հարավային լանջերին³¹: 'Arda-ն (վկայված է 'A-ar-da-a-ka-i ձևով, որտեղ -ka-i «առջև» բառը կցված է 'Arda տեղան-

²³ CICH, XXVI; YKH, № 128, A1, стк. 18—21 (թարգմանությունը տրված է ըստ՝ Հ. Հ. Կարապետյան. Ուրարտական նորահայտ գաղափարագրեր.— ՀՍՍՀ ԳԱ «Լրարեր հաս գիտ.», 1978, № 2, էջ 68—69):

²⁴ [U]RU.A-a[r]-da-ka-i «Արդայի առջև» ընթերցումը տալիս ենք ըստ՝ Ն. Գ. Ենգիբարյան. Ուրարտական Igarab-hubi երկիրը և Arda քաղաքը.— ՀՍՍՀ ԳԱ «Լրարեր հաս գիտ.», 1971, № 11, էջ 80:

²⁵ CICH, XXVI; YKH, № 128, B1, стк. 1—6 (թարգմանությունը մերն է):

²⁶ GENullú.še-e «Լեռնաշղթայի-վրա» ընթերցումը և թարգմանությունը տալիս ենք ըստ՝ Հ. Հ. Կարապետյան. Ուրարտական նորահայտ գաղափարագրեր, էջ 61:

²⁷ Նույն տեղում, էջ 69:

²⁸ E. L a r o c h e. Dictionnaire de la langue louvite. Paris, 1959, p. 32.

²⁹ Strabo. XI, 14, 16: Ագաթանգեղոսի Պատմություն Հայոց. Թիֆլիս, 1914, էջ 399: Մովսիսի Խորենացու Պատմություն Հայոց. Տիֆլիս, 1913, Բ, ԺԴ:

³⁰ Н. В. А р у т ю н я н. Новые урартские надписи. Ереван, 1966, с. 84, 91 (прим. 43): Е г о ж е. Биайнили, с. 426.

³¹ Ա - Դ ա. Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները. Երևան, 1912, էջ 151—152:

վանը) > *Uarda > Վարդո անցումը կարող էր կատարվել հետևյալ կերպ: 'A-ar-da > *ua-ar-da, որի բառավերջի a > ē > 1 հնչյունափոխությունը (հմմտ. URUErdua > *Ardre > Ardui, KURUburda > *Oborde > Obardi³²) կատարվելը *uare > *Uardi (Վարդի), որը եզակի սևուականում կատանար Վարդու ձևը (հմմտ. Գառնի—Գառնու) և վերջին կիսաձայն j-ի անկմամբ՝ Վարդո: Այս ձևը հենց տեղի բնակիչների կողմից ընդունվել է որպես ուղիղ ձև և պահպանվել մինչև մեր օրերը:

Այսպիսով՝ 'Arda > *uarda > *uare > *Uardi *Վարդի > Վարդո անցումը

միանգամայն հնարավոր է և կտրող ենք ասել, որ եթե երկրի միացյալ զորքերը Տեյավեխի թագավոր (= իշխան) Ուտուպուրշեի գլխավորությամբ, ճակատամարտ են տվել ուրարտական զորքերի դեմ Բյուրակնյան լեռների հարավային լանջերին, հավանաբար ցանկանալով օգտագործել նաև լեռների բնական ամրությունները՝ դիմագրավելու համար Արգիշթե I-ի զորքերին:

Ինչպես ևրևում է վերոհիշյալ արձանագրություններից, հաղթելով ճակատամարտում, ուրարտական զորքերն այնուհետև արշավում են Խուշանե, Շիրիադե, Դիդենե երկրները և, գրավելով ու տվելով այդ երկրների քաղաքներն ու ամրոցները, հարձակվում են Տեյավեխի արքայական քաղաք Զուանեի (URUZuane) վրա, գրավում ու այրում են այն, այնտեղ թողնելով արարձանագրություն:

Իսկ որտե՞ղ են արդյոք գտնվել Դիդենե, Խուշանե և Շիրիադե երկրները: KURDji(?) - de - né (Դիդենե) երկրանունը, հավանաբար, պահպանվել է նույն վարդոյի գավառում գտնվող Դոդան (Դոտան) գետի և համանուն գյուղի անվան մեջ: Այդ դեպքը, սկիզբ առնելով Բյուրակն լեռնային գանգվածի հարավային լանջերից, խառնվում է Արեևլյան նեփրատին: Գետի միայն վերին մասն է, ուր ընկած են եղել հայաբնակ գյուղերը Դոտան գյուղի հետ միասին, որ կոչվել է Դոդան-գետ³³, KURDji(?) - de - né (Դիդենե) երկրանվան առաջին -D1 (դի) վանկը մասնագետները կարդում են հարցականով³⁴, քանի որ պահպանվել են di սկզբի վերջին մեկ ուղղահայաց և երկու փոքր հորիզոնական սեպերը, որոնք կարող են լինել նաև u (ու) սկզբի վերջին մասը: Սակայն di ընթերցումը ընդունվել է գրեթե բոլոր հետազոտողների կողմից³⁵ և այն ճիշտ լինելու դեպքում է միայն հնարավոր անցկացնել KURDidene > Դոդան գուդահեռը: KURDji - de - né > Դոդան անցումը կարող էր կատարվել հետևյալ կերպ՝ i(ի) հնչյունը փակ վանկում կարող է տալ o (ո), ինչպես աքադ. tinuru հայ. Թոնիր³⁶, հետևաբար, կլինի *Dodene, e > a ուրարտա-հայկական անցմամբ (հմմտ.՝ Urtehe > Արցախ, KURUelekune > Գեղաքունի)³⁷ կատարվի *Dodane և վերջին կիսաձայն e-ի անկմամբ՝ Dodan—Դոդան (Դոտան): Այս ձևն էլ պահպանվել է մինչև մեր օրերը: Ինչպես տեսնում ենք KURDji -

32 О. О. Карагезян. Локализация урартского царского города Арцашху.— Вестник общественных наук АН АрмССР, 1976, № 5, с. 70.

33 Ա. Դ. Ն. Նշվ. աշխ., էջ 151—152: Հայկական սովետական հանրագիտարան (202). Գ. 3, էջ 410.

34 CICH, XXVI; YKH, № 128, B1, стк. 2.

35 Գ. Ա. Ղափա ն ջ ա ն. Ուրարտուի պատմություն. էջ 167: Ն. Գ. Աղոնց. Նշվ. աշխ., էջ 170, 213:

36 Հ. Հ. Ա ն ա ռ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. I, Երևան, 1940, էջ 196:

37 Г. А. Капанцян. Историко..., с. 20; Հ. Հ. Կ ա ր ա գ յ ո ղ յ ա ն. Արեևլյան..., էջ 62—63:

de-ne > Դոդան (Դոտան) անցումը համապատասխանում է ուրարտա-հայկական լեզվական բուռն օրենքներին և կարող է նոր փաստարկ հանդիսանալ KURDidine (Դիդենե) ընթերցման օգտին:

Այսպիսով, եթե ընդունելի համարենք, որ Դիդենե-Դոդանը գտնվել է Սր-դա-Վարդոյի գավառում, հավանաբար, ոչ շատ հեռու պետք է փնտրել նաև Խուշանե և Շիրիազե երկրները³⁸:

Այդ երկրները գրավելուց հետո Արգիշթե I-ը հարձակվում է Զուանե քաղաքի վրա: Զուանե քաղաքը նույնացվում է ժամանակակից Զիվին գյուղի հետ³⁹, որը գտնվում է Բասենի դաշտում, Արաքսի վերին հոսանքներում, Կարինից Կարս տանող ճանապարհի վրա: Տրված է նաև URUzu-ú-a-ne > Զիւին անցման լեզվական հիմնավորումը⁴⁰:

Արձանագրության շարունակության մեջ ասվում է, որ ուրարտական զորքերը բարձրանում են լեռնաշղթայի վրա՝ Աշկալաշեի վրա: Աշկալաշեն, որը վկայված է [KUR]As-qa-la-se-e⁴¹ ձևով, նույնացվել է էրզրումի վիլայեթում գտնվող ժամանակակից Աշկալա բնակավայրի և համանուն դաշտի հետ⁴²:

Հ. Հ. Կարագյոզյանը [KUR]Ašqalase-ի [KUR] «երկիր» գաղափարագիրը կարդալով GÈN «լեռ», գտնում է, որ Աշկալաշեն ոչ թե երկրանուն է, այլ լեռան անուն⁴³: Նման մոտեցման դեպքում այդ լեռնաշղթան, իր GÈNAšqalase լեռնագագաթով, կարող է լինել արշավանքի երթուղու վրա ընկած լեռնաշղթաներից որևէ մեկը: Հնարավոր է, որ դա եղել է Հայկական Պարի մասը կազմող Սուկավետի լեռները համանուն գագաթով, որը Արածանի գետի հովտում գտնվող երկրները բաժանում է Բասենի դաշտում գտնվող URUZuane (Զիվին) քաղաքից և KURTarlune (Դարոյն) երկրից: Այս ենթադրությունը այնքան էլ անհավանական չի թվա, եթե հիշենք, որ հենց Սուկավետի լեռների հարավային կողմում, դեպի Բասենի դաշտը տանող լեռնանցքի մոտ մինչև մեր օրերը պահպանվել է Աշկալե (Աշխալե⁴⁴) գյուղը, որը կարող էր իր անունը ստացած լինել Աշկալաշե լեռան անունից:

Ի դեպ, մինչև մեր օրերը այս նույն լեռնանցքով են անցել Պարսկաստանը Սև ծովի և Արարատյան դաշտավայրը՝ Փոքր Ասիայի հետ կապող տարանցիկ առևտրի ուղիները, ինչպես նաև Հայաստանի հարավային շրջանները հյուսիսին և արևելյան շրջանները արևմտյանին կապող ներքին հաղորդակցման ճանապարհները⁴⁵:

Խորխոռյան տարեգրության մեջ հիշատակվում է նաև ուրարտացիների կողմից մինչև Բուժե քաղաքը հասնելու, ինչպես նաև Բիանե և Խուշա(նե) երկրները Թարիունե երկրից անջատելու մասին: Հավանաբար, այդ ժամանակ Խուշա(նե) և Բիանե երկրները գտնվել են Թարիունե երկրի կազմում, այսինքն միավորվել էին Թարիունե երկրի գլխավորությամբ: Թեև Թարիունե երկրանունը Ն. Վ. Հարությունյանը իրավացիորեն նույնացնում է պատմական Դարոյնքի անվան հետ, որը գտնվել է Բասենի դաշտում, ներկայիս Հասանկալե

³⁸ Ս. Ս. Ծրեմյանը այդ երկրները տեղադրում է Շարիանի լեռների և Հայկական Պար լեռնաշղթայի միջև (տե՛ս Ս. Ս. Ծրեմյան. Ուրարտու պետությունը մ. թ. ա. 860—590 թթ. քարտեզը):

³⁹ Н. В. Арутюнян. Бийнили, с. 161.

⁴⁰ Հ. Հ. Կարագյոզյան. Արևելյան..., էջ 70:

⁴¹ ClCh, XXVI; YKH, № 128, B1, стк. 6, 11.

⁴² ЗУЗ. հ. 1, էջ 486:

⁴³ Հ. Հ. Կարագյոզյան. Արևելյան..., էջ 61—62:

⁴⁴ Ա - Դ ու ն ղ լ. աշխ., էջ 214:

⁴⁵ Նույն տեղում, էջ 256—258; Я. А. Манандян. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э.—XV в. н. э.). Ереван, 1954, с. 127—135, с. 134 (քարտեզը):

քաղաքի տեղում⁴⁶, սակայն Թարիունե երկիրը տեղագրում է էրզրումից հյուսիս, եփրատ և Ճորոխ գետերի վերին հոսանքներում, Չլդր լճի արևմտյան, հարավ-արևմտյան և հյուսիս-արևմտյան կողմերում⁴⁷։ KUR^{Tarlune} > Գարոյնք լեզվական ստուգաբանությունը (Դ > Թ հնչյունափոխությամբ, վերջին կիսաձայն e-ի անկմամբ և Բ տեղանվանակերտ հոգնակիության ցուցիչի հավելմամբ) միանգամայն օրինաչափ է, հետևաբար Թարիունե երկիրը պետք է տեղագրել հենց այդ շրջանում։

Իսկ որտե՞ղ էր գտնվում KUR^{Biane} (Բիանե) երկիրը, որը այս արշավանքի ընթացքում հիշատակվում է ինչպես խորհրդային տարեգրության մեջ, այնպես էլ նրա կրկնօրինակում։ Հավանաբար, Բիանե երկիրը պետք է փնտնել Թարիունեից դեպի Ջաբախա տանող ճանապարհի վրա, ուր արշավում էին ուրարտական զորքերը։ Այս ճանապարհը կարող էր անցնել միայն Վերին Բասենով դեպի Կարսի շրջանը, որտեղից էլ Չլդր լճի մոտով մինչև Ջաբախա-Ջավախք⁴⁸։ Ահա հենց այս ճանապարհին, Վերին Բասենի և հին Ախուրյան գետի հովտում է տարածված եղել պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Վանանդ գավառը։ Մովսես խորենացին Վանանդ անվան ծագումը կապում է բուլղար Վլդուր Վունդի անվան հետ, որի անունից, իբր, առաջացել է Վանանդ անունը⁴⁹։ Սակայն Վանանդ անվան առաջացումը շատ ավելի հին արմատներ ունի և, հավանաբար, առաջացել է KUR^{Bi-a-né} (Բիանե) երկրանունից։ Եթե անցկացնենք KUR^{Biane} > Վանանդ զուգահեռը, ապա կարելի է հեշտությամբ նկատել, որ KUR^{Bi-a-né-le} հայերեն հնչմամբ կոտա Վան (հմմտ.՝ KUR^{Bi-a-i-né-le} > Վան), որը կկատարվեր b—v (վ) (ինչպես KUR^{Bia-ainele} > Վան, URU^{Erebune} > Երեւան և այլն), 1a > a (օր. KUR^{Giarnia} > Գառնի)⁵⁰ անցումների և վերջին կիսաձայն e-ի անկմամբ։ Ուրեմն, KUR^{Biane} > Վան անցումը միանգամայն օրինաչափ է։ Biane-Վան տեղանվանը հետագայում ավելացել է -անդ բաղադրիչը, որը ունի «հանդ», «դաշտ», «հովիտ» նշանակությունը⁵¹։

Այսպիսով՝ Վանանդ նշանակել է Վանի դաշտ, Վանի հովիտ։ Նման կազմությամբ տեղանուններ Հայաստանում բավականին շատ են, ինչպես՝ Մարանդ, Հաբանդ, Ջարեանդ և այլն։ Հետևաբար, եթե Բիանե երկիրը նույն Վանանդն է, ապա Թարիունե երկրի գլխավորությամբ կազմված միությունը (որի մեջ, ըստ արձանագրության տվյալների, մտել են խուշանե և Բիանե երկրները) տարածված է եղել Արաքսի ստորին հոսանքներից՝ Բասենի դաշտում գտնվող Դարունքից մինչև Կարսի սարահարթը՝ պատմական Վանանդը։ Պարզ է, որ այս միությունը քայքայելու, թուլացնելու նպատակով է Արգիշթե I-ը Թարիունե երկրից անջատել Բիանե և խուշանե երկրները։

Այս արշավանքով Արգիշթե I-ը կարողացավ ծանր հարված հասցնել վերոհիշյալ բոլոր երկրներին, որոնք այլևս ոչ մի անգամ չեն հիշատակվում ուրարտական արձանագրություններում, թեև Արգիշթե I-ը և նրա հաջորդները բազմիցս արշավում են երկրի հյուսիսային կողմերը։ Միայն մեկ անգամ Արգիշթե I-ի հաջորդ՝ Սարգուրե II-ի տարեգրության⁵² մեջ, դեպի Աբելիանեիս,

⁴⁶ Н. В. А р у т ю н я н. Биайнили, с. 408.

⁴⁷ Նույն տեղում, էջ 407։

⁴⁸ KUR^{Zabaha} > Ջավախք անցումը տալիս ենք ըստ՝ Հ. Սանտալճյան. Ասորեստանեւ և պարսիկ սեպագիր արձանագրությունը կամ նոցին բաղվածք, որոնց նախի-Ուրարտու աշխարհին պատմության կվերաբերին. Վիեննա, 1901, էջ 44։

⁴⁹ Մովսիսի խորենացու Պատմութիւն Հայոց. Տփլիս, 1913, Բ, 2։

⁵⁰ Н. В. А р у т ю н я н. Биайнили, с. 427—428.

⁵¹ Հ. Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան. հ. 1, էջ 186։

⁵² YKH, № 155, A—G; ՈւԱ, № 27, էջ 75—76։

երիախե, Կուլխա երկրները կատարած արշավանքի կապակցությամբ հիշատակվում է նաև Խուշա-ալխե երկիրը, որի Խախա թագավորին Սարգուրե II-ը ժողովրդով հանդերձ գերեզարել, բնակեցրել է երկրի կենտրոնական շրջաններում: Այնուհետև նույն բախտին են արժանանում նաև արշավանքի երթուղու վրա ընկած մյուս երկրները⁵³:

Վերոհիշյալ երկրների ճիշտ տեղորոշումը մեզ հնարավորություն է տալիս ճշտելու նաև Արգիշթե I-ի արշավանքի երթուղին: Այսպես՝ Վանից շարժվելով դեպի հյուսիս-արևելք, Արգիշթե I-ը հասել է Բյուրականյան լեռներին, որտեղ գտնվել են 'Arda>Վարդո քաղաքը և ^{KUR}Didene>Դոմոն երկիրը, որտեղից թեթևելով դեպի հյուսիս-արևելք, մտել է Ալաշկերտի դաշտը և Շարխան գետի հովիտը: Այնուհետև առաջ շարժվելով դեպի հյուսիս, ուրարտական զորքերը անցել են Սուկավետի լեռները և մտել Բասենի դաշտը, որի հարավ-արևմտյան մասում գտնվել են ^{URU}Zuane (Ջիվին) քաղաքը և ^{KUR}Tariune (Դարոյնք) երկիրը. իսկ Վերին Բասենում՝ ^{KUR}Biane (Վանանդ) երկիրը, որոնք գրավելով Արգիշթե I-ը շարունակել է իր ճանապարհը դեպի հյուսիս և անցնելով Չլդր լճի մոտով հասել ^{KUR}Zabaha (Ջափախք):

ЛОКАЛИЗАЦИЯ НЕСКОЛЬКИХ СТРАН, УПОМЯНУТЫХ В КЛИНОПИСНЫХ ИСТОЧНИКАХ

В. А. ГАЙСЕРЯН

Резюме

В первом году своего царствования Аргиште I (786—764 гг. до н. э.) отправился в поход на страну Тейавехе для покорения вновь восставшего царя Утупурше, который, по данным Хорхорской летописи и ее дубликата, поднял против урартского господства соседние страны и племенные союзы. Победив в битве, Аргиште I далее завоевывает и покоряет восставшие страны ^{KUR}Didene (Дидене), ^{KUR}Şeriazze (Шериазе), ^{KUR}Husane (Хушане), ^{KUR}Tariune (Тариуне) и ^{KUR}Biane (Биане), относительно локализации которых в специальной литературе есть немалые разногласия. Как данные клинописей, так и дошедшие до нас топонимы Армении позволяют провести параллели 'Arda>Вардо (Վարդո), ^{KUR}Didene>Додан (Դոդան), ^{KUR}Biane>Вананд (Վանանդ) и локализовать эти страны в гаварах Вардо и Вананд Великой Армении.

⁵³ УКН, № 155, С, стк. 1—45.